

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մ Ե Թ Ո Դ Ա Կ Ա Ն Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

ՀՀ 2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՔ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

Ներածություն

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան ՀՀ վարչապետի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1253-Ա որոշմամբ սկսվել է 2016 թվականի բյուջետային գործընթացը և հաստատվել է ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի՝ ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

Սույն մեթոդական ցուցումները մշակվել են նշված որոշման պահանջներին համապատասխան և նպատակ ունեն օժանդակելու Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մամիներին (այսուհետ՝ պետական մարմին կամ հայտատու)՝ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացի շրջանակներում իրենց 2016-2018 թվականների ՄԺԾԾ հայտերի և 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման գործում:

Անհրաժեշտ է նկատի առնել, որ համաձայն ՀՀ վարչապետի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1253-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 35-րդ կետի, հայտատուները իրենց 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմում պետք է մինչև 2015 թվականի օգոստոսի 5-ը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնեն նաև հայտով նախատեսված ծախսային ծրագրերը ծրագրային բյուջետավորման ձևաչափով: Այս աշխատանքները պետք է կազմակերպել սույն մեթոդական ցուցումների Հավելված N 16-ի պահանջներին համապատասխան և նշված հավելվածի 3-րդ (Պետական կառավարչական հիմնարկի կատարողական չափորոշիչները) ու 4-րդ (Այլ միջոցառումների գծով կատարողական չափորոշիչները) բաժիններով նախատեսված տեղեկատվությունը (Doc.3-ը) լրացնել «Times Armenian» տառատեսակով և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել 2-րդ անգամ՝ ՀՀ վարչապետի մոտ ՀՀ պետական կառավարման մարմինների բյուջետային ֆինանսավորման հայտերի, դրանց գծով առաջարկված ֆինանսավորման չափերի հետ կապված քննարկումից և համաձայնեցումից հետո՝ ճշտված ցուցանիշների հիման վրա, մինչև 2015 թվականի սեպտեմբերի 18-ը:

Ժամանակացույցի 58-րդ կետով նախատեսված՝ 2013 թվականի պետական գնումների պլանի կազմման աշխատանքները պետք է կազմակերպել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի «Գնման պլանի ձևը, լրացման կարգը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարություն ներկայացվող գնումների անվանացանկի ձևը, Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների գնումների պլանում փոփոխություն և լրացում կատարելու մասին ծանուցման օրինակելի ձևը հաստատելու, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 6-ի N 673-Ն հրամանում փոփոխություն կատարելու, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի հունիսի 14-ի N 485-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 896-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ժամկետներում, որի մասին կտեղեկացվի լրացուցիչ:

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ ավանդական ձևաչափին զուգահեռ մշակվող ծրագրային բյուջետավորման ներդրման բարեփոխումների պահանջներից բխող ձևաչափերը պետք է կազմվեն Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակներում մշակված ծախսային ծրագրերի կառուցվածքին և դրանց ծրագրային դասակարգման դասիչների համակարգին համապատասխան:

Նկատի ունենալով, որ արդեն իսկ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատվել են ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրեր, ուստի տարածքային զարգացման ծրագրերի գծով հաշվետվողականության մեխանիզմների ստեղծման, ինչպես նաև բյուջետային քննարկումների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է, որ ՀՀ պետական կառավարման մարմիններն իրենց ՄԺԾԾ և բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմեն ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերին համահունչ, այդ հայտերով առաջարկվող ծախսային ծրագրերի հատկացումները ներկայացնեն նաև տարածքային (ըստ մարզերի) բացվածքով՝ համապատասխան բացատրական-վերլուծական տեղեկատվությամբ:

Հարկ է հիշել, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, առաջիկա երեք տարվա՝ Հայաստանի Հանրապետության պետական միջ-նաժամկետ ծախսերի ծրագրի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել կառավարության համար կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան: Միաժամանակ, միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ծառայում է հիմք՝ պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար: Այսինքն, 2016-2018 թվականների ՄԺԾԾ գործընթացը 2016 թվականի բյուջետային գործընթացի ռազմավարական փուլն է:

ՄԺԾԾ գործընթացի շրջանակներում ՄԺԾԾ բարձրագույն խորհուրդը կընդունի առաջիկա երեք տարվա հարկաբյուջետային և ծախսային քաղաքականության վերաբերյալ հիմնական որոշումները,

մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը յուրաքանչյուր պետական կառավարման մարմնի գծով կսահմանի համապատասխան ոլորտներում ՀՀ պետական բյուջեներից իրականացվելիք ծախսերի ֆինանսավորման 2016-2017 թվականների ճշգրտված և 2018 թվականի կողմնորոշիչ չափաքանակներ: Այս որոշումների մասին պետական մարմինները կտեղեկացվեն լրացուցիչ կարգով: Դրանք էլ հիմք կհանդիսանան պետական կառավարման մարմինների համար իրենց 2016-2018 թվականների ՄԺԾՍ հայտի կազմման և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման համար: Իսկ մինչև 2015 թվականի հուլիսի 8-ը ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվելիք ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով յուրաքանչյուր պետական կառավարման մարմնի գծով կսահմանվեն ֆինանսավորման վերջնական կողմնորոշիչ չափաքանակներ, որոնք էլ ուղեցույց կհանդիսանան ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի պատրաստման համար: Պետական մարմիններն իրենց 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը պետք է կազմեն նշված բյուջետային ծախսերի ֆինանսավորման վերջնական կողմնորոշիչ չափաքանակների շրջանակներում:

Համաձայն ՀՀ վարչապետի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1253-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 8-րդ կետի, ելնելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 700-Ն որոշմամբ պետական կառավարման մարմինների գծով հաստատված ՀՀ պետական բյուջեներից իրականացվելիք ծախսերի ֆինանսավորման 2016-2017 թվականների կողմնորոշիչ չափաքանակները ճշգրտելու անհրաժեշտությունից, պետական կառավարման մարմինները մինչև 2015 թվականի փետրվարի 10-ը պետք է ՀՀ ֆինանսների նախարարությանը լրացուցիչ տրամադրեն՝

1. Իրենց կողմից ֆինանսավորվող ծրագրերի կատարող հանդիսացող կազմակերպությունների 2015 թվականի հաստիքային ցուցակները (ներառյալ աշխատավարձերի տարիֆիկացիոն ցուցակները),

2. Սույն մեթոդական ցուցումներին կից առանձին պետական կառավարման մարմիններին էլեկտրոնային ֆայլերով տրամադրվող հաշվարկման ձևաչափերով նախատեսված տեղեկատվությունը:

Սույն մեթոդական ցուցումները հանդիսանում են միասնական ուղեցույց պետական մարմինների համար թե իրենց 2016-2018 թվականների ՄԺԾՍ հայտերի, և թե 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման համար:

Մեթոդական ցուցումները բաղկացած են հետևյալ չորս մասերից

▪ **Մաս 1.-** նկարագրվում են ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾՍ և ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծերի կազմման գործընթացներին վերաբերող ընդհանուր բնույթի հիմնական տեղեկությունները, մասնավորապես՝ ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾՍ և ՀՀ 2016 թվականի

պետական բյուջեի գծով որոշումները և որոշումներ կայացնողները, ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾ և 2016 թվականի բյուջետային գործընթացի հանգուցային ժամկետները և պետական մարմիններին ներկայացվող պահանջները, ինչպես նաև հատուկ ցուցումներ և օրենսդրական հիմքեր՝ բյուջետային ծախսերի հաշվարկների կատարման համար:

- **Մաս 2.-** տրվում են 2016-2018 թվականների ՄԺԾ հայտերի կազմման առանձին ցուցումներ՝ ընդհանուր դրույթների և վերջինիս կից ՄԺԾ հայտի օրինակելի ձևի տեսքով:

- **Մաս 3.-** տրվում են 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման առանձին ցուցումներ՝ ընդհանուր դրույթների և վերջինիս կից բյուջետային ֆինանսավորման հայտի օրինակելի ձևի տեսքով:

- **Մաս 4.-** բերվում են 2016-2018 թվականների ՄԺԾ հայտերի և 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման ցուցումների հավելվածներ:

Ներքին գործավարության էլեկտրոնային համակարգ չունեցող պետական մարմիններին տրամադրվում է սույն մեթոդական ցուցումները և նրան կից բոլոր հավելվածներն ու հաշվարկման ձևաչափերի ֆայլերը պարունակող էլեկտրոնային կրիչ (CD): Վերջիններս զետեղված են նաև ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում:

Մեթոդական ցուցումների կամ բյուջետային գործընթացում ծագած՝ պետական մարմնի նկատմամբ առաջադրվող պահանջներին վերաբերող ցանկացած հարց հայտատուները կարող են ուղղել ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության (հեռ.՝ (060) 700 263, (060) 700 202, (060) 700 225, (060) 700 126, (060) 700 256, (060) 700 145, (060) 700 146, (060) 700 148) և բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության (հեռ.՝ (060) 700 260, (060) 700 213, (060) 700 258, (060) 700 259, (060) 700 261, (060) 700 108, (060) 700 113, (060) 700 114, (060) 700 115, (060) 700 151, (060) 700 152, (060) 700 154, (060) 700 155, (060) 700 257) համապատասխան պատասխանատու մասնագետներին:

ՄԱՍ 1. ՀՀ 2016-2018 ԹԹ. ՄԺԾԾ ԵՎ ՀՀ 2016 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1 ՀՀ 2016-2018 թթ. ՄԺԾԾ որոշումները և որոշումներ կայացնողները

ՄԺԾԾ որոշումներ

ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾԾ մշակման գործընթացը տրամադրում է մի մեխանիզմ, որով ՀՀ կառավարությունը ՄԺԾԾ բարձրագույն խորհրդի որոշումների հիման վրա կկայացնի ռազմավարական որոշումներ իր հարկաբյուջետային քաղաքականության մասին: Մասնավորապես, ՄԺԾԾ գործընթացի արդյունքում կսահմանվեն

- **Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները կամ նպատակները** այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են պետական բյուջեի եկամուտները, ծախսերը, պակասուրդի մակարդակը և պետական պարտքը:

- **Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները.** հաշվի առնելով երկարաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության նպատակները, ակնկալվող եկամուտների մակարդակը և ծախսերի անհրաժեշտությունը, ՀՀ կառավարությունը կորոշի ընդհանուր ծախսերի մակարդակը (և, հետևաբար, պակասուրդը) առաջիկա բյուջետային տարվա և ՄԺԾԾ ժամանակահատվածի հաջորդ երկու տարիների համար:

- **Ռազմավարական ծախսային գերակայությունները.** ՄԺԾԾ գործընթացում ոլորտային և ծախսային գերակայությունների սահմանումը թույլ կտա, որպեսզի ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի նախապատրաստման գործընթացն ուղղորդվի համապատասխանաբար ձևավորված քաղաքական մտադրություններով և մշակված քաղաքականություններով:

- **Պետական մարմինների կողմից իրականացվող քաղաքականության նպատակները և դրանց իրագործման համար կիրառվող ռազմավարությունը.** ՄԺԾԾ գործընթացը հնարավորություն է տալիս պետական մարմիններին ներգրավվել պետության ռազմավարական նպատակների և ծրագրերի մշակման գործընթացում:

1.3. ՄԺԾԾ որոշումներ կայացնողները

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2002 թվականի հունիսի 7-ի N 346-Ն որոշմամբ ստեղծվել են ՄԺԾԾ գործընթացի շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգող և ղեկավարող մարմինները՝ Հայաստանի Հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդը (ՄԺԾԾ բարձրագույն խորհուրդ) և նշված ծրագրերի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբը (ՄԺԾԾ համակարգող խումբ), որոնք՝ համաձայն ՀՀ վարչապետի 2014

թվականի դեկտեմբերի 16-ի N 1253-Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի, շարունակելու են իրենց գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում նաև ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման ժամանակահատվածում:

- **ՄԺԾԾ բարձրագույն խորհուրդն** ապահովում է ռազմավարական որոշումների կայացումը և ՄԺԾԾ մշակման գործընթացի վերահսկողությունը,
- **ՄԺԾԾ համակարգող խումբն** ապահովում է ՄԺԾԾ մշակման աշխատանքների համակարգումը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՄԺԾԾ բարձրագույն խորհրդի և համակարգող խմբի կազմերը՝ համաձայն ՀՀ վարչապետի 2002 թվականի հունիսի 7-ի N 346-Ն որոշման (հաշվի առած ՀՀ վարչապետի 2007 թվականի դեկտեմբերի 17-ի N 888-Ն և 2008 թվականի դեկտեմբերի 17-ի N 1033-Ն որոշումներով կատարված փոփոխությունները):

Աղյուսակ.- ՄԺԾԾ բարձրագույն խորհրդի և համակարգող խմբի կազմերը

Հանձնախմբի անվանումը	Կազմը
ՄԺԾԾ մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդ	ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ) ՀՀ ֆինանսների նախարար (խորհրդի նախագահի տեղակալ) ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար ՀՀ կենտրոնական բանկի նախագահ (համաձայնությամբ) ՀՀ առողջապահության նախարար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար ՀՀ կրթության և գիտության նախարար ՀՀ պաշտպանության նախարար ՀՀ մշակույթի նախարար Հայաստանի հանրապետական կուսակցության ներկայացուցիչներ (խորհրդակցական ձայնի իրավունքով)
ՄԺԾԾ մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ (խմբի ղեկավար) ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Նվիրատու կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ)

ՄԺԾԾ բարձրագույն խորհուրդը ՄԺԾԾ գործընթացի շրջանակներում կկայացնի առանցքային որոշումներ՝ հիմնվելով ՄԺԾԾ համակարգող խմբի առաջարկությունների վրա:

Ոլորտային միջնաժամկետ քաղաքականության հիմնախնդիրները համակարգված ձևով ամփոփելու և ներկայացնելու նպատակով բյուջետային գործընթացի 1-ին փուլում՝ ՄԺԾԾ մշակման գործընթացում ընդգրկված բոլոր պետական մարմինները դասակարգվել են երեք խմբի.

ա) տվյալ ոլորտում գլխադասային մարմիններ,

բ) տվյալ ոլորտում ծրագրեր իրականացնող պետական մարմիններ, որոնք ունեն գլխադասային մարմին,

գ) գլխադասային մարմիններ չունեցող ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական մարմիններ:

Տվյալ ոլորտում գլխադասային մարմինների և այդ ոլորտում ծրագրեր իրականացնող պետական մարմինների ցանկը ներկայացված է ստորև:

Ց Ա Ն Կ

տվյալ ոլորտում գլխադասային մարմինների և այդ ոլորտում ծրագրեր իրականացնող պետական մարմինների

Գործառույթ	Գլխադասային մարմիններ
Պաշտպանություն	ՀՀ պաշտպանության նախարարություն
Հասարակական կարգի պահպանություն	ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն
Ազգային անվտանգություն	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն
Կրթություն և գիտություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Առողջապահություն	ՀՀ առողջապահության նախարարություն
Սոցիալական պաշտպանություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Մշակույթ	ՀՀ մշակույթի նախարարություն
Բնակարանային շինարարություն, քաղաքաշինություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Վառելիք, էներգետիկա և բնական պաշարներ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Շրջակա միջավայրի պաշտպանություն	ՀՀ բնապահպանության նախարարություն
Զրային տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե
Տրանսպորտ, կապ և ճանապարհային տնտեսություն	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

1.2. ՀՀ 2016 թվականի բյուջետային գործընթացի ժամանակացույցի ամփոփ նկարագիրը

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մշակման համար սահմանվել է իրականացվելիք աշխատանքների մեկ միասնական ժամանակացույց, որում միաժամանակ ներառվել են ինչպես գործընթացի 1-ին փուլի՝ ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾԾ մշակման, այնպես էլ 2-րդ փուլի՝ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի

մշակման աշխատանքները: Նշված ժամանակացույցը բերված է սույն մեթոդական ցուցումների Հավելված N 17-ում:

ՄԺԾՄ մշակման փուլում գլխադասային մարմինները պետք է ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնեն իրենց մարմնի և առանձին՝ իրենց ոլորտային ՄԺԾՄ հայտերը և պետք է համակարգեն այս գործընթացն իրենց ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական մարմինների հետ:

Գլխադասային մարմին ունեցող ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական մարմիններն իրենց ՄԺԾՄ հայտերը պետք է ներկայացնեն համապատասխան գլխադասային մարմնին և պետք է մասնակցեն իրենց և համապատասխան գլխադասային մարմնի միջև՝ վերջինիս կողմից սահմանվող կարգով և ժամկետներում տեղի ունեցող քննարկումներին:

Եթե պետական մարմիններն իրականացնում են ծրագրեր գլխադասային մարմին ունեցող մի քանի ոլորտներում, ապա նրանք պետք է յուրաքանչյուր ոլորտի համար առանձին հայտ ներկայացնեն համապատասխան գլխադասային մարմնին՝ վերջինիս կողմից սահմանվող կարգով և ժամկետներում:

Պետական մարմինները, որոնք իրականացնում են ծրագրեր գլխադասային մարմին չունեցող ոլորտներում, պետք է իրենց ՄԺԾՄ հայտերը ներկայացնեն ՀՀ ֆինանսների նախարարություն:

1.3. ՀՀ 2016 թվականի բյուջետային գործընթացում պետական մարմիններին ներկայացվող հիմնական պահանջները և կարևոր ժամկետները

ՀՀ 2016 թվականի բյուջետային գործընթացի մասնակից բոլոր պետական մարմինները ՄԺԾՄ գործընթացի շրջանակներում պետք է մշակեն և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնեն ՄԺԾՄ հայտեր, իսկ այնուհետև նաև ՄԺԾՄ հայտերը՝ բերված ավարտուն տեսքի: ՄԺԾՄ հայտի նպատակն է տեղեկատվություն տրամադրել ՄԺԾՄ բարձրագույն խորհրդին և ՄԺԾՄ համակարգող խմբին, ինչը հիմք կհանդիսանա 2016-2018թթ. ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող ծախսային ծրագրերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ որոշումների կայացման, ինչպես նաև ոլորտային ծախսային ռազմավարության գերակայությունների համատեքստում ՀՀ կառավարության ծախսային ռազմավարությունը ճշգրտելու համար: Պետական մարմինների ՄԺԾՄ ավարտուն տեսքի բերված հայտերը հիմք կծառայեն ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾՄ վերջնական փաստաթղթի՝ ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող մասի կազմման համար: Ծախսային քաղաքականության ռազմավարությունը ներկայացնող մասում կլինի նաև յուրաքանչյուր ոլորտին վերաբերող բաժին:

Գլխադասային մարմիններից պահանջվում է պատրաստել ծախսային քաղաքականության ռազմավարության՝ իրենց ոլորտին վերաբերող բաժինը, ընդ որում նրանք պետք է ապահովեն տվյալ ոլորտի ծրագրերին վերաբերող ողջ տեղեկատվության ճշգրտությունը:

ՄԺԾԾ գործընթացի շրջանակներում պետական բոլոր մարմինների կողմից իրականացվելիք աշխատանքների կատարման կարևոր ժամկետները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ.- ՀՀ 2016 թվականի բյուջետային գործընթացում պետական մարմինների համար կարևոր ժամկետները

Պետական մարմինների կողմից պատրաստվող փաստաթղթերը	Կատարման համար սահմանված ժամկետը
Պետական կառավարման մարմինների կողմից ՄԺԾԾ-ի հիմքում դրվող բյուջետային մուտքերի կանխատեսումների ներկայացում	մինչև 2015 թվականի փետրվարի 9-ը
ՄԺԾԾ մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը հաստատված ՀՀ պետական բյուջեներից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2016-2017թթ ճշգրտված և 2018թ. կողմնորոշիչ չափաքանակների հիման վրա գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական կառավարման մարմինների կողմից իրենց 2016-2018 թթ. ՄԺԾԾ հայտերի (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2016-2018թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները) մշակում և ներկայացում ՖՆ	մինչև 2015 թվականի ապրիլի 30-ը
ՄԺԾԾ մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը հաստատված ՀՀ պետական բյուջեներից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2016-2017թթ ճշգրտված և 2018թ. կողմնորոշիչ չափաքանակների հիման վրա գլխադասային մարմինների կողմից իրենց ոլորտի 2016-2018 թթ. ՄԺԾԾ հայտերի (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2016-2018թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները, ընդ որում, ինչպես ամփոփ, այնպես էլ՝ ըստ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող մարմինների գծով) մշակում և ներկայացում ՖՆ	մինչև 2015 թվականի մայիսի 9-ը
ՀՀ պետական կառավարման մարմինների հետ իրենց ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացում (ըստ անհրաժեշտության)	մինչև 2015 թվականի հունիսի 2-ը
ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ կայացած քննարկումների արդյունքներով գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ավարտուն տեսքի բերված՝ իրենց 2016-2018 թթ. ՄԺԾԾ-ի նախագծերի (ծախսային ռազմավարության) մշակում և ներկայացում ՀՀ ՖՆ	մինչև 2015 թվականի հունիսի 19-ը
ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ կայացած քննարկումների արդյունքներով տվյալ ոլորտում գլխադասային մարմինների կողմից ավարտուն տեսքի բերված՝ ՄԺԾԾ-ի իրենց ոլորտային մասերի նախագծերի (ծախսային ռազմավարության)՝ ներառյալ համապատասխան ոլորտում գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմինների ծախսերի 2016-2018 թթ. ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ ՖՆ	մինչև 2014թվականի հունիսի 19-ը
Պետական կառավարման մարմինների կողմից իրենց և համակարգի 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի (ներառյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափով, ինչպես նաև տարածքային կտրվածքով)	

առանձնացված ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի) կազմում և ներկայացում ՀՀ ՖՆ	մինչև 2015 թվականի օգոստոսի 5-ը
---	---------------------------------

Գլխադասային մարմինների և տվյալ ոլորտում գլխադասային չհաղիսացող պետական կառավարման մարմինների կողմից կատարվող աշխատանքների ժամկետները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ Գլխադասային մարմինների և տվյալ ոլորտում ծրագրեր իրականացնող մարմինների կողմից կատարվող աշխատանքների ժամկետները

Պետական մարմինների կողմից կատարվող աշխատանքները	Կատարման համար սահմանված ժամկետը
<p>Գլխադասային մարմիններն իրենց ոլորտի ՄԺԾ-ի նախագծի մշակման աշխատանքների շրջաններում ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող պետական կառավարման (այդ թվում՝ նաև ՀՀ տարածքային կառավարման) մարմինների հետ՝</p> <p>ա) քննարկումների ժամանակացույցի և գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմինների կողմից իրականացվելիք ծրագրերի գծով ՀՀ 2016-2018թթ. պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակների՝ այդ մարմինների հետ քննարկման կարգի սահմանում և դրա մասին այդ մարմիններին տեղեկացում,</p> <p>բ) քննարկումների անցկացում:</p>	<p>ա) մինչև 2015 թվականի փետրվարի 3-ը</p> <p>բ) մինչև 2015 թվականի ապրիլի 22-ը</p>
<p>Տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող ՀՀ պետական կառավարման մարմինների մասնակցություն ՄԺԾ-ի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ գլխադասային մարմինների կողմից կազմակերպվող քննարկումներին</p>	<p>մինչև 2015 թվականի ապրիլի 22-ը (ըստ գլխադասային մարմինների սահմանած ժամանակացույցի)</p>
<p>ՄԺԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ կայացած քննարկումների արդյունքներով տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ավարտուն տեսքի բերված՝ իրենց ՄԺԾ-ի ոլորտային մասերի մշակում և ներկայացում գլխադասային մարմիններին</p>	<p>մինչև 2015 թվականի հունիսի 10-ը</p>
<p>Պետական կառավարման մարմինների կողմից իրենց և համակարգի 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի (ներառյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափով, ինչպես նաև տարածքային կտրվածքով՝ առանձնացված ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի) կազմում և ներկայացում ՀՀ ՖՆ</p>	<p>մինչև 2015 թվականի օգոստոսի 5ը</p>

1.4 Հատուկ ցուցումներ և օրենսդրական հիմքեր՝ բյուջետային ծախսերի հաշվարկների կատարման համար

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի հաշվարկներն իրականացնելիս Հայտատուները պետք է առաջնորդվեն սույն ցուցումների Հա-

վելված N 15-ում բերված իրավական հիմքերով և դրանք կատարեն վերջիններիս խիստ համապատասխան:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծախսերը և դրանց գծով հաշվարկները ներկայացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանով (հրապարակվել է՝ 15.02.2007թ. Հայաստանի Հանրապետության Գերատեսչական Նորմատիվ Ակտերի Տեղեկագիր N 5-ում) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման համար սահմանված պահանջներով (Հրամանի հավելվածներ N N 5, 16):

Ընդ որում, ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ ներկայացնելիս անհրաժեշտ է վերջիններս ներկայացնել Դաս/Կատեգորիա/Խումբ/Սինթետիկ մակարդակով:

1.4.1- Ցուցումներ պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի հաշվարկման համար.

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի հաշվարկը անհրաժեշտ է ներկայացնել սույն մեթոդական ցուցումներին կից ներկայացված <<9.2.karavarman_aparat2016-2018>> ֆայլի աղյուսակներով (N 1-ից մինչև N 32-ը): Նշված ֆայլի մեջ ընդգրկված համապատասխան ձևերը **լրամշակվել են գործող օրենսդրության նորմերին համապատասխան՝** հաշվի առվելով առանձին մարմինների առանձնահատկությունները: Հայտատուներն այս կարգով կազմված հաշվարկները պետք է ներկայացնեն ինչպես իրենց տարեկան բյուջետային ֆինանսավորման, այնպես էլ ՄԺԾՕ հայտերի կազմում: Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի հաշվարկման համար հայտատուների կողմից հիմք է ընդունվում ստորև բերված ծախսային նորմատիվները:

.Աշխատանքի վարձատրություն - հաշվարկվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձի ֆոնդը հայտատուները հաշվարկում են սույն ցուցումների Հավելված N 15-ում բերված իրավական ակտերին համապատասխան և այդ հաշվարկները ներակայացնում են լրացնելով N N 16,17...32 ձևերը (յուրաքանչյուր պետական մարմին իրեն վերաբերող ձևերը): Վերը բերված ա/, բ/, գ/ և դ/ կետերով նշված բազային պաշտոնային դրույքաչափերի փոփոխության դեպքում հայտատուները կտեղեկացվեն լրացուցիչ կարգով՝ աշխատավարձի ֆոնդը վերահաշվարկելու նպատակով:

Էներգետիկ և ջեոտուցման ծառայություններ՝ հաշվարկվում են ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեոտուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռք բերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» N 629-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ NN 8,9 և 10 ձևերով:

Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ՝ ծախսերը հաշվարկվում են ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաներ սահմանելու մասին» N 1536-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ յուրաքանչյուր հաստիքային միավորի համար օրական 30 լիտր: Բացի այդ ՀՀ դատարանների համար ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի N 732-Ն որոշման պահանջներին համապատասխան նախատեսվում է նաև լրացուցիչ ծախս՝ ելնելով դատական նիստերի դահլիճների ընդհանուր մակերեսի մեծությունից:

Շենքերի պահպանման ծառայություններ /դեռատիզացիա/ ծախսերը նախատեսվում են ըստ կնքված պայմանագրերի:

Կապի ծառայություններ՝ ծախսերը հաշվարկվում են ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին» N 1956-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ N 5 ձևով /ՀՀ դատարանների համար N 6 և 7 ձևերով/:

Ապահովագրության ծառայություններ՝ հաշվարկվում են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Գույքի և սարքավորումների վարձակալություն՝ ծախսերը նախատեսվում են ըստ կնքված պայմանագրերի:

Գործուղումների և շրջագայությունների ծախսեր՝ հաշվարկվում են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն և վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմաներով՝ ձև N 11:

Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման գծով /վարչական, համակարգչային, տեղեկատվական, կառավարչական.../՝ ծախսերը նախատեսվում են համապատասխան հիմնավորումների և հաշվարկների պայմաններում՝ (ձև N 14):

Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման ծախսերը նախատեսվում են համապատասխան հիմնավորումների և նախահաշվի առկայության պայմաններում:

Տրանսպորտային միջոցների պահպանման, ծախսերը հաշվարկվում են ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշմամբ հաստատված ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակին համապատասխան՝ ձև N 14:

Նյութերի և ապրանքների ձեռքբերման ծախսերը /գրասենյակային պիտույքներ, գյուղատնտեսական, կենցաղային և հանրային սննդի, հատուկ նպատակային և այլ նյութեր/ հաշվարկվում են N 14 ձևին համապատասխան:

Հագուստի և համազգեստի ձեռքբերման ծախսերը նախատեսվում են համապատասխան իրավական ակտերով հաստատված ցանկերի համաձայն՝ ձև N 15:

Ոչ ֆինանսական ակտիվների /Տրանսպորտային սարքավորումներ, վարչական սարքավորումներ, այլ մեքենաներ և սարքավորումներ, ոչ նյութական հիմնական միջոցներ.../ գծով ծախսերը նախատեսվում են համապատասխան հիմնավորումների և հաշվարկների առկայության պայմաններում՝ ձև N 12 և N 13:

1.4.2-Ցուցումներ բյուջետային ծախսերի գործառական դասակարգմամբ ներկայացման համար

Բյուջետային ծախսերը և դրանց հաշվարկները գործառական դասակարգմամբ ներկայացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանով բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համար սահմանված պահանջներով (Հրամանի հավելվածներ N N 11, 22):

Ընդ որում, ծախսերը գործառական դասակարգմամբ ներկայացնելիս, անհրաժեշտ է վերջիններս ներկայացնել Բաժին/Խումբ/Դաս մակարդակով:

ՀՀ պետական կառավարման և տարածքային կառավարման մարմինների և ՀՀ համայնքների ղեկավարները պետք է համայնքների տրամադրվելիք սուբվենցիաների հայտերի կազմումը, քննարկումն ու ներկայացումը իրականացնեն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի համապատասխան (հաշվի առած ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 20-ի N 662-Ն որոշմամբ կատարված լրացումը): Մասնավորապես համայնքի ղեկավարները ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով նախապես սուբվենցիայի ստացման ծրագրային հայտերը ներկայացնում են համապատասխան մարզպետին, իսկ Երևանի քաղաքապետը՝ համապատասխան ոլորտային պետական կառավարման մարմիններ և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն: Այդ հայտերը մարզպետարանում քննարկվելուց և ամփոփվելուց հետո ներկայացվում են համապատասխան ոլորտային պետական կառավարման մարմիններ և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ քննարկման: Պետական կառավարման մարմինները ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ քննարկումների արդյունքների հիման վրա սուբվենցիայի ծրագրային հայտի վերաբերյալ դրական եզրակացություն տալու դեպքում ոլորտի գծով տվյալ տարվա համար նախատեսված բյուջետային հատկացումների ընդհանուր չափաքանակների սահմաններում դրանք ներառում են իրենց բյուջետային ֆինանսավորման հայտերում և համապատասխան եզրակացության հետ միասին ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն (Երևան քաղաքի գծով՝ Երևանի քաղաքապետարան), իսկ բացասական եզրակացություն տալու դեպքում՝ դրանք՝ համապատասխան եզրակացության հետ միասին ներկայացնում են ՀՀ տարածքային կառավարման նախարարություն և համապատասխան մարզպետարան (Երևան քաղաքի գծով՝ նաև Երևանի քաղաքապետարան):

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի (սույն մասում այսուհետ՝ Օրենք) պահանջների համաձայն՝ բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համապատասխան համայնքներին տրամադրվելիք սուբվենցիաների մասով՝

1. ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի N 1544-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության ու Հայաստանի

Հանրապետության առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու» կարգով (սույն մասում այսուհետ՝ Կարգ)։

1) Համայնքի ղեկավարն առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերում ներառելու նպատակով ծրագրի ամբողջական փաթեթի հետ միասին **2-ական օրինակից միաժամանակ** ՀՀ բնապահպանության նախարարություն ու ՀՀ առողջապահության նախարարություն (սույն մասում այսուհետ՝ Լիազորված մարմիններ) է ներկայացնում Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն կազմված ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները՝ ծրագրի հավելվածի տեսքով՝ մինչև տվյալ տարվա հուլիսի 1-ը համաձայնեցման համար։ Ծրագիրը կազմվում է Կարգի 3-րդ կետով սահմանված կազմին և բովանդակությունը համապատասխան։

2) Լիազորված մարմինները ՀՀ համապատասխան համայնքների ղեկավարների կողմից ներկայացված բնապահպանական ծրագրերով նախատեսվող միջոցառումների իրականացման առաջնայնությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների վերաբերյալ Կարգով սահմանված ժամկետներում իրենց դիրքորոշումների մասին տեղեկացնում են բնապահպանական ծրագրեր ներկայացրած ՀՀ համապատասխան համայնքների ղեկավարներին։

2. Օրենքի գործողության շրջանակներում ընդգրկված համայնքների ղեկավարները Լիազորված մարմինների հետ համաձայնեցված և համայնքի ավագանու հաստատած բնապահպանական ծրագրերը և դրանց գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու մասին հայտերը ՀՀ տարածքային կառավարման մարմինների միջոցով մինչև 2015 թվականի հուլիսի 17-ը ներկայացնում են ՀՀ բնապահպանության նախարարություն։

3. Լիազորված մարմինների հետ համաձայնեցված ու համայնքի ավագանու հաստատած բնապահպանական ծրագրերը և դրանց գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու մասին հայտերը ՀՀ բնապահպանության նախարարությունը ամփոփում ու ներառում է իր 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտում և մինչև 2015 թվականի օգոստոսի 5-ը ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն։

ՄԱՍ 2. 2016-2018 ԹԹ. ՄԺԾԾ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄԵՐ

Ընդհանուր դրույթներ

ՄԺԾԾ հայտի հիմնական նպատակն է ներկայացնել պետական մարմնի համակարգի (ոլորտի) ծախսային ռազմավարությունը հաջորդ երեք տարվա համար։ Տվյալ ռազմավարությունը ներառում է միջնաժամկետ հատվածում նախատեսված ծրագրերը և աշխատանքները, և թե

ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի նպատակների իրագործմանը: ՄԺԾԾ հայտում պետք է ներկայացնել նաև նախատեսված ծրագրերի և աշխատանքների ֆինանսական գնահատականը և հիմնավորել դրանք՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով բյուջետային ֆինանսավորման հայտերի հաշվարկների համար նախատեսված ձևաթղթերը: ՄԺԾԾ հայտը կազմելիս պետք է ուղղորդվել ՀՀ 2015-2018 թվականների պետակա միջնաժամկետ ծախսային ծրագրով և «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով: Եթե հայտով 2016-2018 թվականների ծախսերը գերազանցում են ՀՀ 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով և ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով համապատասխան տարիների համար նախատեսված ծախսերը, ապա պետք է դրանք հիմնավորել և ցույց տալ, թե ինչպես են նախատեսված ծրագրերը և աշխատանքները կապվում առաջարկված ոլորտային ծախսային ազմավարության իրականացման հետ:

Պետական մարմնի ՄԺԾԾ հայտը (ինչպես նախնական, այնպես էլ ավարտուն տեսքի բերված) պետք է հաստատի (ստորագրի) պետական մարմնի ղեկավարը:

Ստորև ներկայացված է ՄԺԾԾ հայտի օրինակելի ձևը, որում բացատրվում է, թե ինչ է անհրաժեշտ ներկայացնել վերջինիս յուրաքանչյուր բաժնում:

ՄԺԾԾ հայտում ծրագրերը ձևակերպելիս պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով¹.

ա) միևնույն ծրագրում չպետք է ներառվեն ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը,

բ) հանրությանը տրամադրվող տրանսֆերտները² պետք է ներկայացվեն առանձին ծրագրով,

գ) վարկերի, փոխատվությունների, բաժնետոմսերի (փայամասնակցությունների), ինչպես նաև ֆինանսական շուկայի գործիքների հետ գործարքները պետք է ներկայացվեն առանձին ծրագրերով:

Ընդ որում, ընթացիկ ծախսերին, ինչպես նաև հանրությանը տրամադրվող տրանսֆերտներին առնչվող ծրագրերի անվանումները և բովանդակությունը (բացառությամբ կենտրոնական ապարատի պահպանման գծով ծախսերի) պետք է համապատասխանեն ծրագրային բյուջետավորման հավելվածներում ներառված համապատասխան քաղաքականության միջոցառումների անվանումներին և բովանդակությանը:

¹ Աշվածը սկզբունքները չեն կիրառվում ծրագրային դասակարգման (ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությամբ սահմանվող) ծրագրերի կառուցվածքի մշակման ժամանակ (Հավելվածներ 9, 16, 17):

² հանրությանը տրամադրվող տրանսֆերտներում ներառվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման սուբսիդիաների, դրամաշնորհների, սոցիալական նպաստների և կենսաթոշակների, ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպությունների և միջառնությունների գծով ծախսերը, բացառությամբ պետական ոչ առևտրային կազմակերպություններին և 50%-ից ավել պետական մասնակցություն ունեցող կազմակերպություններին վերը նշված ծախսերի գծով հատկացումներին:

ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.2.4 կետի 8-րդ պարբերությամբ նախատեսված «ստեղծվելու են անհրաժեշտ նախադրյալներ լիարժեք ծրագրային բյուջետավորման անցման համար՝ սկսած 2018 թվականից» դրույթի իրականացման նպատակով, ի թիվս ծրագրային բյուջետավորման պահանջներից բխող այլ տարրերի ներդրման, անհրաժեշտ է բյուջետային տեղեկատվությունն օգտագործողների և հանրության համար առավել հետաքրքրություն ներկայացնող թվով 83 բյուջետային ծրագրերի համար 2015-2017 թվականներին ստեղծել բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) համակարգ: Առանձին ՀՀ գերատեսչություններ 2011-2015 թվականներին, փորձնական կարգով, արդեն իսկ մշակել են թվով 35 բյուջետային անձնագրեր, որոնք զետեղված են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում: Մնացած 48 բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) ստեղծման շրջանակները և կատարման ժամկետներները հստակեցվել են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 53 նիստի «Բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) ստեղծման ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 53 արձանագրային որոշմամբ: Ըստ այդմ, առաջիկա երեք տարիներին թվով 25 պետական մարմիններ պետք է կազմեն ընդհանուր թվով 48 բյուջետային ծրագրերի նկարագրեր (անձնագրեր), այդ թվում՝ 2015 թվականին՝ 15, 2016 թվականին՝ 17 և 2017 թվականին՝ 16:

Համաձայն ՀՀ վարչապետի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1253-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 16-րդ կետի, ստորև թվարկված պետական մարմիններն ավարտուն տեսքի բերված իրենց ՄԺԾԾ հայտի հետ մեկտեղ պետք է ներկայացնեն նաև վերը նշված արձանագրային որոշմամբ նախատեսված համապատասխան ծրագրի գծով բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի)՝ սույն մեթոդական ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 18-ում ներկայացված ձեռագրերի և դրա լրացման պահանջներին համապատասխան:

- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտե
- ՀՀ մշակույթի նախարարություն
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
- ՀՀ սիյուռքի նախարարություն
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
- ՀՀ ֆինանսների նախարարություն
- ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն

Բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման նպատակով, որպես բյուջետային ծրագրեր պետք է դիտարկվեն բյուջեի ծրագրային դասակարգմամբ սահմանված ծրագրերը:

(ոլորտի կամ պետական մարմնի անվանումը)

2016-2018

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ (ՄԺԾԾ) ՀԱՅՏ**

1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները³

1.1. Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը.

Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը ներկայացնելիս անհրաժեշտ է նկարագրել տվյալ ոլորտում (համակարգում) ծրագրեր իրականացնող պետական մարմինների իրավասությունների ներքո գտնվող ծառայությունների շրջանակը: Սույն փաստաթղթի իմաստով, մատուցվող ծառայությունների շրջանակը ներառում է հայտատուի կողմից, հասարակությանը կամ հանրային հաստիքի այլ միավորներին մատուցվող ծառայությունները: Ծառայությունների շրջանակը պետք է սահմանված լինի ՀՀ օրենսդրությամբ, քաղաքական, ռազմավարական փաստաթղթերով կամ հայտատու պետական մարմնի ղեկավարի կողմից՝ վերջինիս լիազորությունների շրջանակում: Հնարավորության սահմաններում, ծառայություններն անհրաժեշտ է ներկայացնել խմբավորված տեսքով:

Ծառայությունների յուրաքանչյուր խմբի գծով անհրաժեշտ է նկարագրել այդ ծառայությունների խմբի շահառուների շրջանակը: Ծառայությունների կամ շահառուների խմբի նկարագրության ժամանակ անհրաժեշտ է համապատասխան հղումներ կատարել ՀՀ օրենսդրությանը, քաղաքական, ռազմավարական փաստաթղթերին և այլն:

Այն դեպքերում, երբ տվյալ ծառայության գծով ՀՀ կառավարության պարտավորություններից բացի, սահմանված են նաև պարտավորություններ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) համար, ապա անհրաժեշտ է պարզաբանել ՀՀ կառավարության և ՏԻՄ պարտավորությունների տարբերությունները:

Ծառայությունների շրջանակի մասին տեղակատվությունը հարկավոր է ամփոփել ստորև բերված աղյուսակի տեսքով: Աղյուսակում ծառայությունների կամ շահառուների մասին տեղեկատվությունը պետք է ներկայացնել ընդհանրացված տեսքով⁴, արտացոլելով օրենսդրական, քաղաքական և ռազմավարական փաստաթղթերում ամրագրված՝ հանրության առջև ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունները: Աղյուսակը լրացնելիս կարող եք օգտվել ներդիր 1-ում բերված օրինակից:

³ Փաստաթղթի լրացման համար անհրաժեշտ ցուցումները ներկայացված են շեղատառերով: Ցուցումները չպետք է ներառվեն ներկայացվող ՄԺԾԾ հայտում:

⁴ Անհրաժեշտություն չկա մանրակրկիտ թվարկել ծառայությունները: Պարտադիր չէ, որ ծառայությունների խմբավորումը համընկնի ծրագրային խմբավորման հետ, որոշ դեպքերում ծառայությունները կարելի է խմբավորել ավելի ընդհանրացրած մակարդակով:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը ⁵
1.			
2.			
...			

Աղյուսակ 1. Պետական կառավարման մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության օրինակ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	Հաշմանդամներին հասարակության ինտեգրմանը նպաստող ծառայությունների մատուցում	ՀՀ տարածքում բնակվող հաշմանդամներ	Հաշմանդամներին բժշկասոցիալական վերականգնման և պրոթեզաօրթոպեդիկ օգնության ու վերականգնողական ծառայությունների տրամադրման մասով
2.	Երեխաների խնամքի ծայառությունների մատուցում	Առանց ծնողական խնամքի մնացած մինչև 18 տարեկան երեխաներ, դժվար իրավիճակներում հայտնված 6-18 տարեկան երեխաներ	Ամբողջությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության հանձնված երեխաների տուն-ինտերնատներում խնամվող երեխաներին և դժվար իրավիճակում հայտնված երեխաներին մատուցվող ծառայությունների մասով
3.	Աղքատ ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն աջակցության նպատակով հատկացվող նպաստների տրամադրման գծով քաղաքականության մշակման և նպաստների տրամադրման կազմակերպման ծառայություններ	Անապահովության միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքներ	Ամբողջությամբ
...			

1.2. Վերջին երկու տարիների ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

Ներկայացնել տվյալ ոլորտի (համակարգի) առնվազն վերջին երկու տարիների (2013–2014թթ.) զարգացման միտումները ինչպես ֆիզիկական (ոչ ֆինանսական), այնպես էլ ֆինանսական ցուցանիշների շրջանակներում, մասնավորապես բացահայտել տվյալ ոլորտում

⁵ Նշվում է, թե տվյալ ծառայության փոխհատուցումը պետական բյուջեի հաշվին երաշխավորվում է ամբողջ ծավալով, թե որոշակի սահմաններում:

(համակարգում) իրականացվող ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկան վերջին երկու տարիների համար (օրինակ՝ աճի տեմպեր), ինչպես նաև ներկայացնել վերոհիշյալ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների պլան-փաստացի համադրումները, շեղումների դինամիկան և այդ շեղումների բացատրությունները:

Անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ (2013–2014թթ.) միտումների տարբերությունները դրանց նախորդող տարիների (օրինակ՝ 2007-2012թթ.) միտումներից, ինչպես նաև այդ տարբերությունների բացատրությունները: Մասնավորապես, անհրաժեշտ է նշել նաև իրականացվող ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկայի բացահայտված փոփոխությունների բացատրությունները:

Ներդիր 2. Զարգացման միտումների նկարագրության օրինակ

Հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց պրոթեզավորում, վերականգնողական պարագաներով ապահովում և դրանց վերանորոգում

Հաշվի առնելով մեծ հերթերը հաշմանդամներին պրոթեզավորման և վերականգնողական պարագաների ստացման հետ կապված, 2005-2010թթ. ընթացքում կտրուկ մեծացվեց ֆինանսավորումը այս ծառայության գծով, ընդ որում ֆինանսավորման աճի միջին տեմպը կազմեց տարեկան **շուրջ 22 տոկոս**^{*}, որի պայմաններում հաշմանդամների պրոթեզավորման և տրամադրված վերականգնողական պարագաների թիվը աճեց միջինում տարեկան **շուրջ 3.5 անգամ**^{**}: Արդյունքում, հերթերը զգալիորեն կրճատվեցին:

Ինչ վերաբերում է 2012-2013 թվականներին, ապա այս տարիներին ֆինանսավորումը պահպանվել է նույն չափով^{**} (պլանը կատարվել է ամբողջությամբ), որի պայմաններում հաշմանդամներին տրամադրված պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և վերանորոգված պարագաների թիվը նվազել է միջինում **շուրջ 4.6 տոկոսով**^{**} (պլանը կատարվել է շուրջ 103 տոկոսով): Հասկանալի է որ վերջին երկու տարիների ընթացքում նախորդ երկու տարիների համեմատ այս ծառայությունների տրամադրման աճի տեմպը զգալիորեն նվազել է, քանի որ տարիներով կուտակված պահանջարկը հիմնականում բավարարվել էր արդեն, իսկ 2012-2013 թվականներին շեշտադրում է կատարվել նաև պրոթեզների և վերականգնողական պարագաների տեսականու ընդլայման և որակի բարձրացման վրա^{***}:

* Ցույց է տրված ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների 2005-2010 թթ միտումները
** Ցույց է տրված 2012-2013 թթ միտումները
*** Բացատրվում է միտումների փոփոխության տրամաբանությունը

1.3. Հիմնական խնդիրները

Թվարկել տվյալ ոլորտի (համակարգի) հիմնական խնդիրները և բացատրել, թե ինչպես են այդ խնդիրները կապված ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերում (հատկապես ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրում) ամրագրված ընդհանուր տնտեսական և սոցիալական խնդիրների և նպատակների հետ: Հիմնախնդիրներն անհրաժեշտ է հնարավորության սահմաններում խմբավորել ըստ համապատասխան վերջնական արդյունքների և ներկայացնել թվային (քանակական) ցուցանիշների տեսքով:

Աերդր 3. Խնդիրների նկարագրության օրինակ

... Շարունակում է հրատապ մնալ սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների հասցեականության բարձրացման և աղքատության կրճատման հարցը* (Տես՝ ՀԶԾ, 366-րդ, 368-րդ և 385-րդ կետերը**): Վարվող տնտեսական ու սոցիալական քաղաքականության հիման վրա այս խնդրի գծով կատարած է զգալի աշխատանք, մասնավորապես 2014 թվականի դրությամբ նպաստառու ընտանիքներ/աղքատության ստորին շեմից ցած գտնվող ընտանիքներ հարաբերակցությունը կազմել է 75% (2017 թվականին նախատեսվում է նշված ցուցանիշը հասցնել շուրջ 95%-ի, իսկ աղքատության մակարդակը երկրում հասցնել շուրջ 24%-ի (2012 թվականի՝ 32.4-ի փոխարեն), ծայրահեղ աղքատության պարագայում՝ 2.4%-ի (2012 թվականի՝ 2.8-ի փոխարեն): Նախատեսում է նաև անհավասարության կրճատումը երկրում և նրա առանձին տարածքային միավորների միջև համայնքային միավորների ներգրավման ակտիվացման միջոցով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքները ավելի մոտ են գտնվում շահառուներին: Ճիշտ է, ներկայումս բավականին դժվար է թվային արտահայտությամբ գնահատել համայնքային միավորների ակտիվացման ազդեցությունը***: ...

* Ցույց է տրվում խնդիրը
** Ցույց է տրվում կապը ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերում ամրագրված ընդհանուր տնտեսական և սոցիալական խնդիրների և նպատակների հետ
*** Այն դեպքում, երբ հնարավոր չէ խնդիրը ներկայացնել թվային արտահայտությամբ, համապատասխան նշում է կատարվում այդ մասին

2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

2.1. Նպատակները

Նպատակների ձևակերպումը պետք է լինի հստակ և հնարավորինս սեղմ՝ 1-2 նախադասությամբ: Նպատակներն անհրաժեշտ է փոխկապակցել ծրագրերի հետ և սահմանել այնպես, որ վերջիններս բխեն ՀՀ կառավարության ընդհանուր նպատակներից և լինեն շարունակական ու կայուն՝ առնվազն միջնաժամկետ հատվածում: Յուրաքանչյուր նպատակի գծով անհրաժեշտ է համապատասխան հիմնավորող հղումներ կատարել ՀՀ կառավարության ընդհանուր նպատակները սահմանող համապատասխան օրենսդրական, ռազմավարական և քաղաքական փաստաթղթերին: Նպատակներն անհրաժեշտ է ձևակերպել այնպես, որ վերջիններս չպարունակեն դրանց իրականացման հետ կապված մեթոդների մասին նշում:

Ընդ որում, նպատակներն անհրաժեշտ է ձևակերպել այնպես, որ դրանց իրագործման դեպքում ծածկվեն սույն ցուցումների 1.1 կետին համապատասխան բացահայտված ծառայությունների և շահառուների շրջանակները:

2.2. Գերակայությունները

Թվարկել գերակայությունները, հիմնավորելով դրանք՝ կապելով առաջիկա երեք տարիների նպատակների հետ: Գերակա ուղղությունները ներկայացնել ըստ գերակայությունների նվազման հաջորդականության: Գերակայությունների սահմանումը պետք է հնարավորություն

տա եզրակացություններ կատարելու <<նպատակներ – գերակայություններ – ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ>> կապի շուրջ: Մասնավորապես, գերակայությունները պետք է խմբավորված (շարադրված) լինեն այնպես, որ հնարավոր լինի ստուգել դրանց համապատասխանությունը 2.1 կետում շարադրված նպատակներին, ինչպես նաև հիմնավորել ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կանխատեսվող միտումը: Այսինքն, գերակայությունները սահմանելիս դրանք պետք է հիմնավորվեն ըստ ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների գծով նախատեսվող միտումներով, որոնք իրենց հերթին պետք է հիմնավորվեն << կառավարության տնտեսական և ծրագրային քաղաքականության միտումներով:

Գերակայությունների սահմանումը ենթադրում է, որ բնագավառին հատկացվելիք լրացուցիչ միջոցներն առաջին հերթին բաշխվելու են առավել գերակա ուղղությունների միջև: Այդ պատճառով նոր նախաձեռնությունների առաջարկման դեպքում, պետք է դրանք հիմնավորվեն սույն բաժնում նշված գերակայություններով:

Գերակայությունների մասին տեղակատվությունը ամփոփել ստորև ներկայացված աղյուսակում: Այն դեպքում, երբ ՄԺԾԾ ժամանակահատվածի երեք տարիների ընթացքում գերակայությունները չեն փոխվում, աղյուսակի համապատասխան տողում ըստ տարիների երեք սյուները միավորել մեկ վանդակում:

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին ⁶
	2016	2017	2018	
1				
2				
3				
4				
5				

Ներդիր 4. Գերակայությունների նկարագրության օրինակ

⁶ օրինակ՝ հղում << կառավարության ծրագրի համապատասխան դրույթին

Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
2016	2017	2018	
1	Նվազագույն ամսական աշխատավարձի չափի աստիճանական բարձրացում		ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, 2014-2017 թթ ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշման 1-ին մաս)
2	Կենսաթոշակների շարունակական աճ		ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, 2014-2017 թթ ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշման 2.4.1. մաս)
3	Պետական նպաստների՝ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների, երեխայի խնամքի նպաստի ծրագրերի հասցեականության, մատչելիության, թափանցիկության բարձրացում		ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից բխող աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր (ՀՀ կառավարության 15.04.2010 թ. N 452-Ն որոշման 2-րդ մաս)
4	Սոցիալական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական և լիարժեք ներդրում՝ սոցիալական համալիր ծառայությունների տրամադրում «Մեկ պատուհանի» սկզբունքով		ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, 2014-2017 թթ ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշման 2.4.1. մաս), ՀՀ կառավարության 26.07.2012 թ. N 952-Ն որոշում
5	Զբաղվածության ռազմավարությամբ նախանշված քաղաքականության նոր մոդելի իրավական, գործառնական, ինստիտուցիոնալ հիմքերի ամբողջական ապահովում և գործարկում և աշխատաշուկայում անմրցունակ անձանց զբաղվածության խնդիրների լուծման միջոցառումներ		ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, 2014-2017 թթ ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշման 2.4.1. մաս), «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք
6	Մանկատներում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվի կրճատում՝ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, որդեգրման, խնամակալության և հոգաբարձության հանձնելու և այլընտրանքային ծառայությունների մատուցման միջոցով		ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 2-րդ կետ*
7	Հաշմանդամների համար մատչելիության ապահովում և ինտեգրում հասարակություն		ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, 2014-2017 թթ ՀՀ կառավարության ծրագիր N 511-Ա որոշման 2.4.1. մաս), ՀՀ կառավարության 27.05.2014 թ. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2016	2017	2018	
				որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Ն որոշման 390-րդ կետ**

* Ներկայացվում է, ըստ տարիների գերակայությունների փոփոխությունների տրամաբանությունը
 ** Կատարվում է հղում համապատասխան ռազմավարական փաստաթղթին

3. ՄԺԾԾ Ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Համառոտ նկարագրել, թե ինչպես են ոլորտում (համակարգում) գոյություն ունեցող ծրագրերը (պարտավորությունները) նպաստում ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը:

Համառոտ նկարագրել, նաև կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կամ որոնց միջոցով իրականացվում է վերը նշված ծրագրերը:

Սույն փաստաթղթի իմաստով գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ են համարվում << 2015-2017 թվականների պետական ՄԺԾԾ-ով կամ <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> << օրենքով հաստատված ծախսային պարտավորությունները: Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները ճշգրտվում են միայն հաշվի առնելով հետևյալ գործոնները.

ա) ծախսային գործոնների մասին արված ենթադրություններում (կանխատեսվող ցուցանիշներում) հայտատուից անկախ պատճառներով տեղի են ունեցել այնպիսի փոփոխություններ, որոնք չեն հանգեցնում հաստատված ծառայությունների և/կամ շահառուների շրջանակի փոփոխության, սակայն կարող են հանգեցնել ծախսային ծրագրերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների փոփոխության:

բ) հայտատուից անկախ պատճառով առաջացել են այնպիսի գործոնները, որոնք հանգեցնում են ծառայությունների և/կամ շահառուների շրջանակի նվազեցմանը:

Գոյություն ունեցող ծրագրերի (պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ամփոփ ծախսերը ներկայացնել առանձին աղյուսակով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 1-ում ներկայացված աղյուսակի ձևաչափին համապատասխան: Գոյություն ունեցող ծրագրերի համար նշված ձևաչափն օգտագործելիս դրանցում չպետք է ներառվեն նոր նախաձեռնությունների գծով ծախսերը: Միաժամանակ, ներկայացնել գոյություն ունեցող ծրագրերի (պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ամփոփ ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 9-ում ներկայացված աղյուսակների ձևաչափին համապատասխան:

2016-2018 թթ. ժամանակահատվածի համար գոյություն ունեցող ընթացիկ բնույթի պարտավորությունների հաշվարկն ըստ առանձին ծրագրերի ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելվածով 2-ում ներկայացված աղյուսակներին համապատասխան: Նշված աղյուսակներում յուրաքանչյուր ծրագրի համար համառոտ նկարագրել այն հիմնական

գործոնները, որոնք որոշիչ դեր են ունեցել ծախսային հայտի ձևավորման գործում, դրանք խմբավորելով հետևյալ կերպ.

ա) գնային գործոններ՝ այստեղ արտացոլվում են մատուցվող ծառայությունների կամ իրականացվող միջոցառումների գնի փոփոխության կանխատեսումները միջինժամկետ հատվածի համար,

բ) գործոններ, որոնք տվյալ բնագավառում վարվելիք քաղաքականությունից անկախ են⁷, օրինակ՝

– ժողովրդագրական (բնակչության տեղաշարժի, սեռահասակային կազմի, աշխատուժի կառուցվածքի և զբաղվածության և այլ փոփոխություններ),

– բնակլիմայական (տեղումնային, ջերմաստիճանային, երկրաբանական ռեժիմների և այլ փոփոխություններ),

– սոցիալ-տնտեսական (բնակչության սոցիալական կառուցվածքի, նվազագույն պարենային և սպառողական զամբյուղների կառուցվածքի և այլ փոփոխություններ), և այլն,

գ) գործոններ, որոնք անմիջականորեն կախված են ոլորտում (համակարգում) վարվելիք քաղաքականությունից և գտնվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իրավասությունների շրջանակում (այստեղ յուրաքանչյուր գործոնի համար անհրաժեշտ է տալ համապատասխան հղում ՀՀ Սահմանադրությանը, կամ համապատասխան օրենքի դրույթին),

դ) գործոններ, որոնք անմիջականորեն կախված են ոլորտում (համակարգում) վարվելիք քաղաքականությունից և գտնվում են ՀՀ կառավարության իրավասությունների շրջանակում, (այստեղ յուրաքանչյուր գործոնի համար անհրաժեշտ է տալ համապատասխան հղում ՀՀ կառավարության որոշումներին, ռազմավարական ու քաղաքական փաստաթղթերին, նախարարի հանձնարարականներին և այլն):

Այս խմբում են արտացոլվում նաև ոլորտին (համակարգին) բնորոշ հատուկ գործոնները, որոնք պայմանավորված են կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման միջոցների փոփոխությամբ (օրինակ, կարողությունների զարգացման ծախսեր և այլն):

Ներկայացված ծախսային գործոններից յուրաքանչյուրն անհրաժեշտ է ներկայացնել թվային արտահայտությամբ, հիմնավորելով դրանք համապատասխան հղումներով:

Ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկը (ընթացիկ և կապիտալ) ներկայացնել սույն ցուցումներին առանձին առդրված (էլեկտրոնային կրիչով) բյուջետային ֆինանսավորման հայտի համար նախատեսված ծախսերի հաշվարկների ձևերին համապատասխան:

⁷ Բացառությամբ (ա) կետում թվարկված գործոնների

3.2. Նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր

Համառոտ նկարագրել նոր նախաձեռնությունները և ինչպես են դրանք նպաստելու ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը:

Սույն փաստաթղթի իմաստով նոր նախաձեռնություններ են համարվում այն ծախսային պարտավորությունները, որոնք հանգեցնում են ՀՀ 2015-2017 թվականների պետական ՄԺԾԾ-ի կամ ՀՀ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ծախսային պարտավորություններով սահմանված ծառայությունների և կամ շահառուների շրջանակի ընդլայնմանը: Այսինքն, երբ հաստատված ծառայությունների շրջանակից դուրս առաջարկվում է մատուցել նոր ծառայություններ և/ կամ հաստատված ծառայությունները տարածել շահառուների նոր խմբերի վրա:

Բացատրել, թե նոր նախաձեռնությունները հիմնավորող գործոններից յուրաքանչյուրի ազդեցությամբ ինչ նոր ծրագրի (ծրագրեր), ծառայություններ (աշխատանքներ) կպահանջվեն կամ գոյություն ունեցող ծառայությունների գծով նոր շահառուների խմբեր կընդգրկվեն և նկարագրել, թե ինչպես են դրանք նպաստելու ՀՀ կառավարության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը (կատարել հղումներ ՀՀ կառավարության ընդհանուր նպատակներն ու գերակայությունները սահմանող համապատասխան փաստաթղթերին): Եթե նշված գործոնները պայմանավորված են օրենսդրության փոփոխությամբ կամ ռազմավարական և քաղաքական որոշումներով, ապա անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան փաստաթղթերին (դրույթներին):

Այն դեպքերում, երբ նախատեսվում է նոր ծրագրի իրականացում (այլ ոչ թե գոյություն ունեցող ծրագրերի ընդլայնում), ապա անհրաժեշտ է մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք հիմնավորում են տվյալ որոշումը:

Եթե նախատեսվում է նոր նախաձեռնություն գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, սակայն պահանջվում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա ներկայացնել համապատասխան բացատրություններ և հիմնավորումներ:

Նոր նախաձեռնությունների առնչությամբ իրականացվելիք ծրագրերի գծով ամփոփ ծախսերը ներկայացնել առանձին աղյուսակով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 1-ում ներկայացված աղյուսակի ձևաչափին համապատասխան: Նոր նախաձեռնությունների համար նշված ձևաչափն օգտագործելիս դրանցում չպետք է ներառվեն գոյություն ունեցող ծրագրերի (պարտավորությունների) գծով ծախսերը: Միաժամանակ, ներկայացնել նոր

նախաձեռնությունների գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ամփոփ ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 9-ում ներկայացված աղյուսակների ձևաչափին համապատասխան:

2016-2018թթ. ժամանակահատվածի համար նոր նախաձեռնությունների (նոր ծրագրերի, ծառայությունների (աշխատանքների) և շահառուների խմբերի) գծով կանխատեսվող ծախսերի հաշվարկը ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 3-ում ներկայացված աղյուսակի ձևաչափին համապատասխան:

Մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք ընկած են տվյալ առաջարկի ֆինանսական գնահատականի հիմքում, ներկայացնել նաև համապատասխան հաշվարկներ, ինչպես նաև ներկայացնել նոր ծրագրերի, ծառայությունների (աշխատանքների) իրականացման կամ շահառուների նոր խմբի սպասարկման արդյունքում ակնկալվող առավելությունները և օգուտները:

Այն դեպքերում, երբ նոր նախաձեռնությունների գծով ենթադրվում է ծառայությունների կամ շահառուների փոքր շրջանակի համար փորձնական ծրագրերի իրականացում, ապա հայտում անհրաժեշտ է կատարել նշում այդ մասին:

Թվարկել նոր նախաձեռնությունների ֆինանսավորման հավանական այլընտրանքային աղբյուրները՝ այլ աղբյուրներ կամ խնայողություններ այլ ծրագրերից: Ֆինանսավորման այլ հավանական աղբյուրի առկայության կամ այլ ծրագրերում խնայողություններ ակնկալելու դեպքում, այդ տեղեկատվությունը ներկայացնել առանձին աղյուսակով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 4-ում ներկայացված աղյուսակի ձևաչափին համապատասխան:

Նոր նախաձեռնություններից յուրաքանչյուրի վերաբերյալ վերոհիշյալ տեղեկատվությունը ներկայացնել առանձին հավելվածի տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 5-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

4. Ոլորտի (համակարգի) պետական հատվածի եկամուտները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)

Համառոտ ներկայացնել ոլորտի (համակարգի) պետական հատվածում գործող կազմակերպությունների կողմից 2016-2018 թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացվող եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների) և ներկայացնել դրանք ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգմամբ՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 6-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

5. Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրեր

Նկարագրել ըստ մարզերի, թե ինչպես են դրանք նպաստելու տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը, որքանով են համահունչ ՀՀ կառավարության որոշեցրած զարգացման քաղաքականությանը, առաջարկվող ծախսային ծրագրերի հատկացումները ներկայացնել նաև տարածքային (ըստ մարզերի) բացվածքով, որոնք պետք է պարունակեն համապատասխան բացատրական-վերլուծական տեղեկատվություն:

6. Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր

Համառոտ նկարագրել արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը և այդ ֆինանսական ռեսուրսների ստացման աղբյուրները (առանձին ցույց տալով նաև այդ ծրագրերի գծով ՀՀ կառավարության համաֆինանսավորման չափաքանակները): Ներկայացնել դրանք նաև բյուջետային ծախսերի գործառական դասակարգմամբ՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 7-ում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:

Ծրագրերի նկարագրությունները պետք է լինեն բովանդակային՝ համապատասխան հաշվարկներով հիմնավորված:

Բովանդակային բացատրագրերում առնվազն պետք է ներառվեն ծրագրերի գծով ըստ գնումների պլանի ընթացիկ (ԾԻԳ-երի պահպանման ծախսերի՝ ներառյալ հաստիքացուցակով նախատեսվող աշխատավարձի ֆոնդի և աշխատողների թվաքանակի, խորհրդատվական աշխատանքների և այլ ընթացիկ ծախսերի) և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (այդ թվում՝ ըստ օբյեկտների շինարարության, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության և ապրանքների ձեռքբերման մրցույթների փուլերի, և այլ կապիտալ ծախսերի) ընթացքի և կանխատեսումների վերաբերյալ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներով տեղեկատվական և վերլուծական դրույթներն ըստ ծրագրերի բաղադրիչների, այդ թվում՝

ա/ շինարարական և այլ աշխատանքների գծով՝ իրականացվելիք աշխատանքներն ըստ օբյեկտների, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությունը կամ բացակայությունը, մրցույթի ընթացքը, կապալի պայմանագրի առկայությունը, շինարարական աշխատանքների ավարտը և կանխատեսումների հիմքում դրված ենթադրությունները,

բ/ ապրանքների և նյութերի ձեռքբերման գծով՝ ապրանքների տեսականին, անհրաժեշտությունը և նպատակը, ձեռքբերման մրցույթի ընթացքը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,

գ/ տեխնիկական աջակցության և խորհրդատվության գծով՝ ձեռքբերման անհրաժեշտությունը և նպատակը, նախատեսված ծախսի հաշվարկ-հիմնավորումը, տեխնիկական առաջադրանքների (TOR-երի) առկայությունը, մրցույթի ընթացքը, ծառայության մատուցման ավարտը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,

դ/ կառավարման կամ ԾԻԳ-երի պահպանման ծախսերի գծով՝ նախատեսված ծախսերի անհրաժեշտությունը, նպատակը, ուղղվածությունը և համապատասխան պարզաբանումները:

7. Ոլորտի (համակարգի) գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2016-2018 թթ. ժամանակահատվածի համար

Ներկայացնել 2016-2018 թթ ժամանակահատվածի համար ոլորտի (համակարգի) գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 8-ում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:

8. ՄԺԾԾ հայտի հետ կապված ռիսկերը

Ավարտուն տեսքի բերված ՄԺԾԾ հայտում ներկայացնել նաև հայտի հետ կապված հիմնական ռիսկերը և դրանց վերլուծությունը: Մասնավորապես ներկայացնել ՄԺԾԾ հայտի (ըստ առանձին ծրագրերի) հիմքում ընկած ենթադրությունների իրատեսականության հետ կապված հիմնական ռիսկերը (օրինակ ծախսային գործոնների գծով չճշտված ենթադրություններ, կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի մակարդակի չճշտված կանխատեսումներ և այլն), որոնք կարող են բացասաբար ազդել ՄԺԾԾ հայտով ներկայացված նպատակների և արդյունքների ձեռք բերման վրա:

Ռիսկերի վերլուծությունը պետք է պարունակի հնարավոր ռիսկերի նկարագրությունը, դրանց հանդես գալու հավանականությունը, վերջիններիս հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա, ինչպես նաև այդ ռիսկերի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները: Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփել ստորև բերված աղյուսակում:

N	Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը ⁸	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները

⁸ Ներկայացնել 1-5 թվանշանով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն

ՄԱՍ 3. -2016 Թ. ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄԵՐ

Ընդհանուր դրույթներ

Բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնական նպատակն է ներկայացնել 2015 թվականի պետական բյուջեի շրջանակներում պետական մարմնի կողմից իրականացման ենթակա ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ մանրամասն հաշվարկներ: Բյուջետային ֆինանսավորման հայտը ներկայացնելիս պետք է ուղղորդվել ՀՀ 2016-2018 թվականների համար ՄԺԾԾ բարձրագույն խորհրդի կողմից սահմանված ծախսային ծրագրերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներով: Եթե 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտով 2016 թվականի համար առաջարկվող ծախսերը գերազանցում են ՀՀ 2016-2018 թվականների պետական ՄԺԾԾ-ով 2016 թվականի համար նախատեսված ծախսերի չափաքանակները, ապա պետք է դրանք հիմնավորել և ցույց տալ, թե ինչպես են նախատեսված ծրագրերը և աշխատանքները կապվում ՄԺԾԾ-ով հաստատված ոլորտային ծախսային ռազմավարության իրականացման հետ:

Պետական մարմնի 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը (ինչպես նախնական, այնպես էլ ավարտուն տեսքի բերված) կազմվում և ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվում մեկ ամբողջական փաստաթղթի տեսքով՝ հայտատուի ղեկավարի կողմից ստորագրված ուղեկցող գրությամբ:

Ստորև ներկայացված է բյուջետային ֆինանսավորման հայտի օրինակելի ձևը, որում բացատրվում է, թե ինչ է անհրաժեշտ ներկայացնել վերջինիս յուրաքանչյուր բաժնում:

Բյուջետային ֆինանսավորման հայտում ծրագրերը ձևակերպելիս պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով⁹.

- ա) միևնույն ծրագրում չպետք է ներառվեն ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը,
- բ) հանրությանը տրամադրվող տրանսֆերտները¹⁰ պետք է ներկայացվեն առանձին ծրագրով,
- գ) վարկերի, փոխատվությունների, բաժնետոմսերի (փայամասնակցությունների), ինչպես նաև ֆինանսական շուկայի գործիքների հետ գործարքները պետք է ներկայացվեն առանձին ծրագրերով:

⁹ Աշվածը սկզբունքները չեն կիրառվում ծրագրային դասակարգման (ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությամբ սահմանվող) ծրագրերի կառուցվածքի մշակման ժամանակ (Հավելվածներ 9, 16, 17):

¹⁰ Խանութային տրամադրվող տրանսֆերտներում ներառվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման սուբսիդիաների, դրամաշնորհների, սոցիալական նպաստների և կենսաթոշակների, ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին նվիրատվությունների գծով ծախսերը, բացառությամբ պետական ոչ առևտրային կազմակերպություններին և 50%-ից ավել պետական մասնակցություն ունեցող կազմակերպություններին վերը նշված ծախսերի գծով հատկացումների:

Ընդ որում, ընթացիկ ծախսերին, ինչպես նաև հանրությանը տրամադրվող տրանսֆերտներին առնչվող ծրագրերի անվանումները և բովանդակությունը (բացառությամբ կենտրոնական ապարատի պահպանման գծով ծախսերի) պետք է համապատասխանեն ծրագրային բյուջետավորման հավելվածներում ներառված համապատասխան քաղաքականության միջոցառումների անվանումներին և բովանդակությանը:

(պետական մարմնի անվանումը)

2016

**ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՀԱՅՏ**

1. ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ ¹¹

Ներկայացվում են բյուջետային հայտում ներառված ծրագրերի գծով ամփոփ ֆինանսական ցուցանիշները (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները և նոր նախաձեռնությունները)¹ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելվածներ 10-ում, 11-ում և 12-ում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան: Ըստ որում հավելված 20-ի աղյուսակը (ծախսերի բաշխումն ըստ վարչատարածքային բաժանման) ներկայացվում է երկու անգամ՝ 1-ին անգամ 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմում (համաձայն ժամանակացույցի 35-րդ կետի պահանջի) և 2-րդ անգամ՝ ՀՀ վարչապետի մոտ ՀՀ պետական կառավարման մարմինների բյուջետային ֆինանսավորման հայտերի, դրանց գծով առաջարկված ֆինանսավորման չափերի հետ կապված քննարկումից և համաձայնեցումից հետո՝ ճշտված ցուցանիշների հիման վրա, մինչև 2015 թվականի սեպտեմբերի 18-ը:

2. 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Ներկայացվում է հայտում ներառված ծրագրերի գծով պահանջվող ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ առանձին ծրագրերի: Յուրաքանչյուր ծրագրի գծով ներկայացվում են ինչպես գոյություն ունեցող պարտավորությունների, այնպես էլ նոր նախաձեռնությունների վերաբերյալ հաշվարկներ և հիմնավորումներ՝ ստորև ներկայացված ցուցումներին համապատասխան:

2.1 ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայացվում է տեղեկատվություն տվյալ ծրագրի շրջանակներում ներառված գոյություն ունեցող պարտավորությունների վերաբերյալ: Սույն ցուցումների իմաստով գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ են համարվում ՀՀ 2016-2018 թվականների պետական ՄԺԾԾ-ով 2015 թվականի համար հաստատված ծախսային պարտավորությունները:

2.1.1 Գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկն ու հիմնավորումը

Այս հատվածում ներկայացվում է ծրագրի գծով գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկն ու հիմնավորումն ըստ առանձին գործոնների:

Ծրագրի գծով գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները 2016 թվականի համար կարող են ճշգրտվել՝ միայն հաշվի առնելով հետևյալ գործոնները.

¹¹ Փաստաթղթի լրացման համար անհրաժեշտ ցուցումները ներկայացված են շեղատառերով: Յուցումները չպետք է ներառվեն ներկայացվող փաստաթղթում:

Ա) 2016-2018թթ. ՄԺԾԾ-ում ծախսային գործոնների մասին արված ենթադրու-
թյուններում (կանխատեսվող ցուցանիշներում) հայտատուից անկախ պատճառներով տեղի են
ունեցել այնպիսի փոփոխություններ, որոնք չեն հանգեցնում ՀՀ 2016-2018 թվականների
պետական ՄԺԾԾ-ով հաստատված ծառայությունների և/կամ շահառուների շրջանակի
փոփոխության, սակայն կարող են հանգեցնել ծախսային ծրագրերի ֆինանսավորման
կողմնորոշիչ չափաքանակների փոփոխության:

Բ) Հայտատուից անկախ պատճառով առաջացել են այնպիսի գործոնները, որոնք
հանգեցնում են ՀՀ 2016-2018 թվականների պետական ՄԺԾԾ-ով հաստատված
ծառայությունների և/կամ շահառուների շրջանակի նվազեցմանը:

Ծրագրի գծով գոյություն ունեցող ընթացիկ բնույթի պարտավորությունների հաշվարկն ու
հիմնավորումը ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 2-ում ներկայացված
Աղյուսակ Ա-ին համապատասխան: Եթե սույլալ ծրագրում չեն ներառվում ընթացիկ բնույթի
գոյություն ունեցող պարտավորություններ, կամ դրանցում չեն նախատեսվում
փոփոխություններ, ապա սույլալ ծրագրի գծով համապատասխան աղյուսակը չի լրացվում:

Աղյուսակ Ա-ում ծրագրի համար անհրաժեշտ է համառոտ նկարագրել այն հիմնական
գործոնները, որոնք որոշիչ դեր են ունեցել ծախսային հայտի ձևավորման գործում, դրանք
խմբավորելով հետևյալ կերպ.

ա) Գնային գործոններ՝ այստեղ արտացոլվում են մատուցվող ծառայությունների կամ
իրականացվող միջոցառումների գնի փոփոխությունը, հաշվի առնելով սույն մեթոդական
ցուցումներում տրված ընդհանուր գնային փոփոխականների կանխատեսումները 2015
թվականի համար: Եթե ծրագրի գծով գնային փոփոխականները որոշակիորեն տարբերվում են
մեթոդական ցուցումներում տրված ընդհանուր գնային փոփոխականների
կանխատեսումներից, ապա անհրաժեշտ է տալ հիմնավորող բացատրություններ:

բ) գործոններ, որոնք սույլալ բնագավառում վարվելիք քաղաքականությունից անկախ
են¹², օրինակ՝

ժողովրդագրական (բնակչության տեղաշարժի, սեռահասակային կազմի, աշխատուժի կառուց-
վածքի և զբաղվածության և այլ փոփոխություններ),

բնակլիմայական (տեղումնային, ջերմաստիճանային, երկրաբանական ռեժիմների և այլ փոփո-
խություններ),

¹² Բացառությամբ (ա) կետում թվարկված գործոնների

սոցիալ-տնտեսական (բնակչության սոցիալական կառուցվածքի, նվազագույն պարենային և սպառողական զամբյուղների կառուցվածքի և այլ փոփոխություններ), և այլն:

Եթե ծրագրի գծով վերը նշված գործոնների արժեքները որոշակիորեն տարբերվում են մեթոդական ցուցումներում տրված ընդհանուր սոցիալ տնտեսական փոփոխականների կանխատեսումներից, ապա անհրաժեշտ է տալ հիմնավորող բացատրություններ:

գ) Գործոններ, որոնք անմիջականորեն կախված են ոլորտում (համակարգում) վարվելիք քաղաքականությունից և գտնվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իրավասությունների շրջանակում: Այստեղ յուրաքանչյուր գործոնի համար անհրաժեշտ է տալ համապատասխան հղում ՀՀ սահմանադրությանը, կամ համապատասխան օրենքի դրույթին:

դ) Գործոններ, որոնք անմիջականորեն կախված են ոլորտում (համակարգում) վարվելիք քաղաքականությունից և գտնվում են կենտրոնական կառավարության իրավասությունների շրջանակում: Այստեղ յուրաքանչյուր գործոնի համար անհրաժեշտ է տալ համապատասխան հղում ՀՀ կառավարության որոշումներին, ռազմավարական ու քաղաքական փաստաթղթերին, նախարարի հանձնարարականներին և այլն: Այս խմբում են արտացոլվում նաև ոլորտին (համակարգին) բնորոշ հատուկ գործոնները, որոնք պայմանավորված են կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման միջոցների փոփոխությամբ (օրինակ, կարողությունների զարգացման ծախսեր և այլն):

Ներկայացված ծախսային գործոններից յուրաքանչյուրն անհրաժեշտ է ներկայացնել թվային արժեքներով և դրանք հիմնավորել համապատասխան հղումներով թվային արժեքների հիմքերին (օրինակ՝ սղաճի ցուցանիշը ընդունված է 3 տոկոս (թվային արժեք), հաշվի առնելով բյուջետային ցուցումներում սղաճի կանխատեսվող մակարդակը (հղում)):

Գոյություն ունեցող պարտավորությունների գծով լրացուցիչ ֆինանսավորման (2016-2018 ՄԺԾԾ-ով տվյալ ծրագրի գծով 2015 թվականի համար հաստատված չափաքանակներից ավելի) վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփ ներկայացնել առանձին աղյուսակներով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 13-ում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:

Ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկը (ընթացիկ և կապիտալ) ներկայացնել սույն ցուցումներին առանձին առդրված (էլեկտրոնային կրիչով) ծախսերի հաշվարկների ձևերին համապատասխան:

2.1.2 Գոյություն ունեցող պարտավորությունները

Ծրագրի գծով գոյություն ունեցող պարտավորությունները ներկայացնելիս, եթե տվյալ պարտավորությունները ՀՀ 2016-2018 թվականների պետական ՄԺԾ-ում ներառվել են որպես նոր նախաձեռնություններ, ապա այդ մասին անհրաժեշտ է կատարել համապատասխան նշում: Ընդ որում, այն դեպքերում, երբ ՀՀ 2016-2018 թվականների պետական ՄԺԾ-ում հաստատված նոր նախաձեռնությունները նախատեսվել են նոր իրավական հիմքերի ստեղծման նախապայմանով, ինչպես նաև գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, որը սակայն պահանջում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա անհրաժեշտ է հայտնում ներկայացնել բացատրություններ և հղումներ նշված նախապայմանների կատարման (առկայության) մասին:

2.2 ՆՈՐ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայացվում է տեղեկատվություն տվյալ ծրագրի շրջանակներում ներառված նոր նախաձեռնությունների վերաբերյալ: Սույն ցուցումների իմաստով նոր նախաձեռնություններ են համարվում այն ծախսային պարտավորությունները, որոնք հանգեցնում են ՀՀ 2016-2018 թվականների պետական ՄԺԾ-ով 2016 թվականի համար սահմանված ծառայությունների և /կամ շահառուների շրջանակի ընդլայնմանը, այսինքն՝ երբ հաստատված ծառայությունների շրջանակից դուրս առաջարկվում է մատուցել նոր ծառայություններ և կամ հաստատված ծառայությունները տարածել շահառուների նոր խմբերի վրա:

Այն դեպքերում, երբ տվյալ ծրագրի շրջանակներում չեն նախատեսվում նոր նախաձեռնություններ, ապա տվյալ ծրագրի համար սույն բաժինը չի լրացվում:

2.2.1 Նոր նախաձեռնությունների հաշվարկն ու հիմնավորումը

Այս հատվածում ներկայացվում է ծրագրի գծով նոր նախաձեռնությունների հաշվարկն ու հիմնավորումն ըստ առանձին գործոնների: Գործոնների խմբավորման համար անհրաժեշտ է կիրառել սույն ցուցումների 2.1.1 կետով սահմանված՝ գործոնների խմբավորման կանոնները:

Անհրաժեշտ է բացատրել, թե նոր նախաձեռնությունները հիմնավորող գործոններից յուրաքանչյուրի ազդեցությամբ ինչ նոր ծառայություններ (աշխատանքներ) կպահանջվեն կամ գոյություն ունեցող ծառայությունների գծով նոր շահառուների խմբեր կընդգրկվեն, և նկարագրել, թե ինչպես են դրանք նպաստելու ՀՀ կառավարության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը (կատարել հղումներ ՀՀ կառավարության ընդհանուր

նպատակներն ու գերակայությունները սահմանող համապատասխան փաստաթղթերին): Եթե նշված գործոնները պայմանավորված են օրենսդրության փոփոխությամբ կամ ռազմավարական և քաղաքական որոշումներով, ապա անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան փաստաթղթերին (դրույթներին):

Եթե նախատեսվում է նոր նախաձեռնություն գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, սակայն պահանջվում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա ներկայացնել համապատասխան բացատրությունները և հիմնավորումները:

Ներկայացնել ծրագրի շրջանակներում առաջարկվող նոր նախաձեռնությունների (նոր ծառայությունների (աշխատանքների) և շահառուների խմբերի) գծով կանխատեսվող ծախսերը աղյուսակով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 3-ում ներկայացված աղյուսակի ձևաչափին համապատասխան:

Մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք ընկած են տվյալ առաջարկի ֆինանսական գնահատականի հիմքում, ներկայացնել նաև համապատասխան հաշվարկներ, ինչպես նաև ներկայացնել նոր ծրագրերի, ծառայությունների (աշխատանքների) իրականացման կամ շահառուների նոր խմբի սպասարկման արդյունքում ակնկալվող առավելությունները և օգուտները:

Այն դեպքերում, երբ նոր նախաձեռնությունների գծով ենթադրվում է ծառայությունների կամ շահառուների փոքր շրջանակի համար փորձնական ծրագրերի իրականացում, ապա հայտում անհրաժեշտ է կատարել նշում այդ մասին:

Ըստ տնտեսագիտական դասակարգման հողվածների՝ նոր նախաձեռնությունների հաշվարկը (ընթացիկ և կապիտալ) ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 15-ում բերված ծախսերի հաշվարկների օրինակելի ձևերին համապատասխան:

3. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Տարածքային զարգացմանն առնչվող իրականացվելիք ծրագրերի գծով ներկայացնել սույն մեթոդական ցուցումների Մաս 2-ի (ՄԺԾԾ հայտի օրինակելի ձևի) 6-րդ կետում նշված ծրագրերի նկարագրությունը՝ 2016 թվականին վերաբերող թարմացված տեղեկատվությամբ:

4. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐ

Արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվելիք ծրագրերի գծով ներկայացնել նաև սույն մեթոդական ցուցումների Մաս 2-ի 6-րդ կետում նշված ծրագրերի նկարագրության բացատրագրի 2016 թվականին վերաբերող թարմացված տեղեկատվությունը և տվյալ ծրագրերն իրականացնող գրասենյակների (ԾԻԳ-երի) պահպանման ծախսերի նախահաշիվները՝ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող ձևաչափերին համապատասխան, դրանց հաշվարկ-հիմնավորումներով:

Հաշվարկ-հիմնավորումներում առնվազն պետք է ներառվեն ծախսերի հաշվարկման գործող մեթոդաբանությամբ և նորմատիվներով կոնկրետ հաշվարկները և կանխատեսումների հիմքում դրված սցենարները՝ դրանց վրա ազդող գործոնային գնահատումներով և պարզաբանումներով՝ 2016/2015թթ. համադրմամբ և շեղումների դեպքում՝ համապատասխան պարզաբանումների ներկայացմամբ, այդ թվում՝

- աշխատողների թվաքանակը, ըստ պաշտոնների աշխատավարձի ամսեկան դրույքաչափերը և աշխատավարձի ֆոնդի հաշվարկը, համադրումը ընթացիկ տարվա ցուցանիշների հետ և փոխկապակցումը ծրագրի իրականացման ընթացքի հետ,

- ծառայությունների (գործառնական և բանկային, էներգետիկ, կոմունալ, կապի, ապահովագրության, վարձակալության և այլն) ձեռքբերման ծախսերի հաշվարկը, համադրումները և փոփոխության դեպքում՝ դրանց գործոնային ազդեցության գնահատումները և պարզաբանումները,

- գործուղումների և շրջագայությունների (ներքին և արտաքին) ու գործուղվող անձանց քանակը, մեկնման վայրերը, անհրաժեշտությունը և նպատակը, գործուղման ծախսերի հաշվարկ-հիմնավորումները, համադրումները և կապը ծրագրի իրականացման տվյալ փուլի հետ,

- այլ պայմանագրային ծառայությունների (վարչական, համակարգչային, տեղեկատվական, մասնագիտական զարգացման, կառավարչական, ներկայացուցչական և այլն) անհրաժեշտությունը, պահանջվող գումարների հաշվարկները, մրցույթների ընթացքի, պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը և պարզաբանումները,

- ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի գծով (շենքեր և մեքենաներ) հաշվարկները, նորոգման բնույթը և ծավալը, և այդ շրջանակներում կատարվող ձեռքբերումների հիմնավորումը,

- նյութերի (գրասենյակային, վերապատրաստման, տրանսպորտային) և այլ ծախսերի գծով հաշվարկները և համադրումները:

5. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

